

6. Այդ և դրանց հետ տնօրհանող հարակից հարցերը լուծելու համար անհրաժեշտ է ռեզիդենսայ առևտրային ստեղծող հիմնարկություններին ու մասնագետների ավելի սերտ համագործակցություն և աշխատանքների կոորդինացիա՝ ՍՍՀՄ ԳԱ Ազգագրության ինստիտուտի գլխավորությունով:

### Է.Տ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԼԽԻ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ  
ԵՎ ԴՐԱՆՑ ՀՆԱԳՔԻՑՆ ՋՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ

1. Անցյալ դարի վերջերին և 20-րդ դ. սկզբներին Արևելյան Հայաստանի բնատարածքում հավաստիված է կանանց գլխի հարդարանքի հինգ համալիր. դրանցից չորսն ունի ավանդույթային բնույթ, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է որոշակի ազգագրական խմբի:

2. Համալիրները գլխի հարդարանքի զանազան տիպերի համամասնությունով լինելով տարբեր, ըստ կրելու եղանակի, նաև սանրվածքի, ունեն երկու պարտադիր տարր՝ կոպի և գլխաշոր:

3. Ջանազան կարգի պատմական հուշարձանների և ազգագրական նյութերի ավյալների հիման վրա փորձ է արվում հետևելու գլխի հարդարանքի այդ երկու տիպի կենցաղավարման պատմությունը, ինչպես և հայերի մեջ դրանց տարածվածությունը տակավին վաղ միջնադարից:

4. Հնագիտական հուշարձանները հնարավորություն են ընձեռում բացահայտելու մեզ հետաքրքրող գլխի հարդարանքի նախատիպերի գոյությունը Հայկական բարձրավանդակում և սահմանամերձ բնատարածքներում՝ հայ ժողովրդի կազմավորումից դեռ շատ առաջ:

5. Շատ ժողովուրդների հայտնի կոպիների և գլխաշորերի հնագույն նմուշների բացահայտումը թվում է, թե ուշագրավ կարող է լինել գլխի հարդարանքի այդ տիպի ծագման հարցը լուծելու առումով:

### Ա.Ա. ՕԴԱԲԱՇՅԱՆ

ՈՒԽՏԱՎԱՅՐԵՐԻ ԴԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ուխտագնացություն սովորույթը հայտնի է աշխարհի շատ ժողովուրդների, մասնավորապես արևելյան:

Այդ ինստիտուտի համեմատական ուսումնասիրությունը կօգնի բացահայտելու ինչպես դրան ծագման, այնպես էլ յուրաքանչյուր ժողովրդի կենցաղում պաշտամունքային համակարգի հետ ունեցած կապերի առանձնահատկությունները:

Սույն հաղորդումը նվիրված է միայն հայերի կենցաղում ուխտագնացության ընդհանուր ընդլայնմանը: Այդ նպատակով կատարվում է առայսօր մեր տրամադրության տակ առկա նյութերի դասակարգման փորձ: Այդ իմաստով ուխտագնացության ինստիտուտը ներկայանում է հետևյալ տեսքով:

1. Հայերը վաղուց ի վեր գիտեին և օգտվում էին համաքրիստոնեական ուխտավայրերից / Երուսաղեմ, Հռոմ/:

2. Գործում էին համահայկական նշանակության ուխտավայրեր /Մշո Սուլթան Սուրբ Կարապետ, Եջմիածին, Սևանի վանք և այլն/:

3. Գործում էին ուխտավայրեր համեմատաբար որոշակի մի շրջանակի համար, որ համարյա համընկնում էր ազգագրական շրջաններին/ Վասպուրականի համար՝ Լիմ Թնապատը, Արևելյան Հայաստանում՝ Գառնի-Գեղարդը, Արայի լեռը, Տաթևի վանքը և այլն/:

4. Տեղական նշանակության ուխտավայրեր, ուր գնում էին շրջակա մի քանի գյուղերից:

5. Յուրաքանչյուրը բնակավայրի շրջանակում կային ուխտավայրեր, բացառապես տեղական նշանակության: Դա կարող էր լինել ավել բնակավայրի եկեղեցին, ինչպես նաև ավել բնակավայրի սահմանում գտնվող սրբազան պուրակներ /ծառեր/, աղբյուրներ, ժայռեր /քարեր/ և այլն:

Ուխտագնացության ինստիտուտի կարևոր ընդունված գծերից է դրա կապը ժողովրդական տոնացույցի հետ: Ամեն մի տոն ունեւր իր որոշակի ուխտավայրը, ուր գնում էին հատկապես այդ օրը, այսպես՝ Արայի լեռը կապվում էր Համբարձման՝ Վարդավառի հետ:

Պատմական Հայաստանի ուխտավայրերը հնշտությունք ենթարկվում են ֆունկցիոնալ դասակարգման: Մարդու սոցիալական կյանքի և կենցաղի բոլոր դրսևորումները կապի մեջ էին որոշակի ուխտավայրերի հետ: Այսպես, կային ուխտավայրեր հիվանդության, , մուրազատու, , , երդման, որդեծնություն և այլն, և այլն:

Մինչև 19-րդ դարի վերջը՝ ուխտավայրերի հետ կապվում էին հավատալիքների և պատկերացումների որոշակի դրսևորումներ, որոնք կարևոր դեր ունեին ժողովրդի կրոնական մտածողության ընդհանուր համակարգում :

Վերջին երկու տասնամյակի ընթացքում մեր հավաքած դաշտային նյութերի հիմամբ կարելի է անել հետևություն, որ սկսած 20-րդ դ. սկզբից ուխտազնացության ինստիտուտի արդեն ենթարկվում էր փոփոխությունների և աստիճանաբար կորցնում նախկին դերն ու նշանակությունը կենցաղում :

Այսօրվա կենցաղում պահանջվել են ուխտազնացության ինստիտուտի այն կողմերը, որոնք կապված են եղել ժողովրդական զանգվածային զվարճությունների և տոնակատարությունների հետ : Դա հասկանալի է դառնում, եթե նկատի առնվի, որ հայերի կենցաղում միշտ էլ ուխտազնացությունը համընկնում էր ժողովրդական տոնացույցի զարնասամառային շրջանին :

#### Կ. Վ. ՍԵՂՈՍՅԱՆ

ՆՈՐԱՅՆԱՑՈՒՄՆԵՐԸ ՋԱՎԱԽԵԻ ՀԱՅԵՐԻ ԱՐԴԻ ԿԵՆՅԱՂՈՒՄ  
ՈՐՊԵՍ ԷԹՆՈ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈՒՆՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ա Ր Գ Ա Ս Ի Զ

1. Հավաքելը վրացական ՍՍՀ բազմազգ պատմա-ազգագրական շրջաններից է : Այնտեղ բնակվում են հայեր, վրացիներ, ռուսներ, հույներ, հրեաներ և ուրիշներ : Սրանց մեջ գերակշռում են հայերը, որոնք այստեղ հաստատվել են հիմնականում 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո : Շրջանի մյուս առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ թվարկված ազգերի մեջ կան բազմազան ազգագրական խմբեր, որպիսի երևույթը խորը կնիք է դրել էթնիկական և ազգագրական պրոցեսների և էթնո-մշակութային փոխազդեցությունների բնույթի վրա :

2. Հավաքի բազմազգությունը և սոցիալ-տնտեսական պարփակվածությունը առաջին տասնամյակներում զգալիորեն արգելակում էր տնտեսա-մշակութային և այլ կարգի փոխհարաբերությունների հաստատմանը : Սակայն շրջանի բնակչության, տնտեսական պայմանների բազմազանությունը, որ նպաստում էր պարանքափոխակությունը, 19-րդ դարի երրորդ քառորդում կապիտալիստական հարաբերությունների ներ-